ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 5 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ»[1]

5-րդ դարի հայ ազատագրական շարժումների պատմությունը շուրջ 200 տարի է, ինչ դարձել է պատմաբանասիրական ուսումնասիրության թեմաներից մեկը։ 5-րդ դարի հայ ազատագրական շարժումների պատմությամբ զբաղվել են ոչ միայն մասնագետ պատմաբանները, այլև բանասերները, հրապարակախոսները, գրականագետները, լեզվաբանները, դրամատուրգները։ Ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում գրվել ու հրապարակվել են բազմաթիվ աշխատություններ, գրքեր, պատմական վեպեր, պիեսներ և բանասիրական գործեր։ Մասսայական հետաքրքրությունը դեպի 5-րդ դարի հայ ազատագրական շարժումները շատ բնական ու հասկանալի է. 5-րդ դարում հայ ժողովուրդը զենքը ձեռքին պաշտպանեց իր հայրենիքի պատիվը, փառքը, անկախությունը, պետական ինքնուրույնությունը։ Հուրջ 400 տարի երկու բռնակալ աշխարհները՝ Հռոմը և Պարսկաստանը, իսկ ավելի ուշ բյուզանդական հպարտ կայսրությունը և գոռոզ սասանյանները համառ, հետևողական և դաժան պայքար ծավալեցին Հայաստանը բաժանելու, տնտեսապես չլատելու, քաղաքականապես տկարացնելու, հայ ժողովրդին ֆիզիկապես ոչնչացնելու համար։ Հայաստանի այդ կատաղի երկու հարևանները դիմեցին զենքի, դիվանագիտական խարդախ խաղերի և՝ երբ դառն իրականությունը նրանց համոզեց, որ անկարող են խորտակել հայ ժողովրդի համառ կամքն ու իր հայրենիքի անկախության համար պայքարելու պատրաստակամությունը, այն ժամանակ «անողորմ և չար, տկար և թուլամորթ ազգն հունաց...[2] դիմեց իր դարավոր նենգ, ստոր և խարդախ քաղաքականությանը։ Բյուզանդացիները, ինչպես վկայում է Փավստոսը, դիմեցին պարսիկներին, ասելով... «ի միջի մեր ամբառնալ զգլուխս»։[1]

Հայաստանը բաժանելու, նրան տնտեսապես և քաղաքականապես տկարացնելու պարսկա-բյուզանդական քաղաքական այս ծրագիրը, ինչպես հայտնի է, պատմական իրականություն դարձավ 385-87 թվերին, երբ բյուզանդական կայսր Թեոդորոս առաջինը (379—395 թ. թ.) և պարսկական բռնակալ Շապուհ 3-րդը (384—388-89 թ. թ.) փոխադարձ համաձայնությամբ բաժանեցին պատմական Հայաստանը։ Հայաստանը երկու մասի բաժանելուց հետո, ինչպես վկայում է Փ. Բյուզանդացին «...բազում գաւառք յերկուցունցն հատան, նուազեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւն հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայնմ ժամանակ և յապայ»։[2]

Պատմական Հայաստանի լավագույն մասը՝ (⁴/₅) 387 թ. դաշինքի հետևանքով անցավ Պարսկաստանի «դառն բռնաւորս» լծի տակ։

Սակայն այդ դեռ բոլորը չէր։ 390—391 թվերին, Արշակ թագավորի մահից հետո, բյուզանդական կայսրությունը ոչնչացրեց հայ Արշակունիների խղճուկ մնացորդները բյուզանդական Հայաստանում, իսկ 428-29 թվերին պարսկական արքունիքն իր հերթին ոչնչացրեց հայ Արշակունիների դինաստիան՝ Արևելյան կամ Պարսկական Հայաստանում։ 4-րդ դարի վերջերին և 5-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի դլխին կախվեց մահացու վտանգ։

Ամբողջ 4-րդ և հատկապես 5-րդ դարերում հայ աշխատավոր ժողովուրդը սուրը ձեռքին կատաղի պայքարի դուրս եկավ թշնամիներ-

---

[1] Հ. Հասրությանյան, «Վարդանանց պատերազմը», Երևան, 1947 թ. Հրատարակություն ՀՍՍՌ Գեղարվեստի Հեռակա մանկավարժական ինստիտուտի. 182 էջ։

[2] Մ. Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1869 թ. էջ 112—162։

[1] Փ. Բյուզանդացի, «Պատմութիւն հայոց», ՍՊԲ, 1883 թ., էջ 222։

[2] Նույն տեղը։

րի դեմ. նա ոտքի ելավ պաշտպանելու իր հայրենիքի փառքը, անկախությունը, ազատությունը։ Ժողովրդական մասսաների այդ հերոսական պայքարն էր, որ հայ ժողովրդին ոչ միայն փրկեց ֆիզիկական ոչնչացումից, այլ և՝ չնայած դաժան պայմաններին, նա կարողացավ ոտի կանգնել, անսովոր փառքով պսակել իր պատմական ուղին։ Ավելին։ Հայ ստեղծագործ ժողովուրդը տվեց բազմաթիվ տաղանդավոր գործիչներ, հրապարակախոսներ, պատմագետներ, զորավարներ, զուսաններ։ Եվ այս փայլուն համաստեղության մեջ ամենապայծառը մնաց ինքը ժողովուրդը։ Այս է հիմնականն ու գլխավորը, որ շուրջ 200 տարի հուզել և հուզում են հետազոտողներին՝ 4-րդ և 5-րդ դարերի պատմական դեպքերը, 5-րդ դարի պատմական դեպքերի մեջ «Վարդանանց պատերազմը» գրավում է իր ուրույն տեղը։ Սակայն «Վարդանանց պատերազմը» տարբեր դասակարգերի ներկայացուցիչների մոտ ստացել է տարբեր գնահատական։

Հայ կղերա-ֆեոդալական պատմագրությունը սկսած Մ. Չամչյանից և ավարտած մինչ բուրժուական պատմագրության հանդես գալը, կատարելով հայ լուսավորչական եկեղեցու և նախարարական-ֆեոդալական դասերի քաղաքական ու սոցիալական պատվերը, ամեն կերպ ձգտել է ապացուցելու, որ «Վարդանանց պատերազմը» հանդիսացել է «առաջին կրոնական մեծ պատերազմը», որի նպատակն է եղել, իբր թե պաշտպանել հայ եկեղեցու փառքը և պատիվը։ Մ. Չամչյանը իր «Պատմութիւն հայոց» եռահատոր աշխատության երրորդ հատորը նվիրել է 5-րդ դարի դեպքերին և աշխատել է պատմականորեն «ապացուցելու», որ «Վարդանանց պատերազմը» մղվել է հայ եկեղեցու սկզբունքները՝ բարբարոս պարսկական զրադաշտական կրոնի ոտնձգություններից պաշտպանելու համար։ Հետագայում կղերա-ֆեոդալական համարյա բոլոր պատմաբանները կուրորեն կրկնել են Մ. Չամչյանի այս կարծիքը։

19-րդ դարի երկրորդ կեսերից սկսած, երբ հանդես եկավ հայ բուրժուական պատմագրությունը, նրա առաջավոր ներկայացուցիչները մի քայլ առաջ անցան իրենց նախորդներից։

Բուրժուական պատմագրության ներկայացուցիչներ Գարագաշյանը,[1] Ադոնցը,[2] Կուլեսերյանը,[1] Ակինյանը,[2] Փորթուգալ փաշան[3] և ուրիշները փորձեր կատարեցին «Վարդանանց պատերազմը» ներկայացնելու, որպես սոցիալական ավելի խորը դրդապատճառների արդյունք, քան իրենց նախորդները։

Այսպես, օրինակ, Մ. Գարագաշյանն իր աշխատության չորրորդ հատորում առաջին անգամ դուրս եկավ այն սովորական և տիրապետող կարծիքի դեմ, որ, իբր «Վարդանանց պատերազմը» կրոնական պատերազմ էր։ Գարագաշյանը 5-րդ դարի դեպքերին տվեց նախարարական-ֆեոդալական բնույթ։ Հաղկերտ 2-րդը,— գրում է նա,— նպատակ էր դրել ոչ միայն հայերին զրադաշտական դարձնել, այլև ոչնչացնել հայ նախարարների դարավոր իրավունքներն ու արտոնությունները։ Հաղկերտ 2-րդի այդ քաղաքականությունը 5-րդ դարի շարժումների պատճառը դարձավ։

Հետագայում Ն. Ադոնցն իր «Марзбан Васак перед судом историков» հոդվածում զարգացնելով Գարագաշյանի այդ դրույթը, հանգեց այն եզրակացության, որ «Եղիշեի մոտ եղած մի շարք վկայությունները ցույց են տալիս, որ 5-րդ դարի խռովությունները ունեցել են ոչ միայն կրոնական, այլ սոցիալական բնույթ»։

Մինչ սովետական պատմագրությունն այս երկու կարծիքները տիրապետող և սովորական կարծիքներ էին։ Անցյալ պատմագրության արմատական թերությունն այն էր, որ նրա ներկայացուցիչները «Վարդանանց պատերազմի» պատմությունը մեկուսացրել, կտրել էին իր սոցիալական հիմքից, հասարակական և քաղաքական կացությունից, այն կոնկրետ միջավայրից, որտեղ ծնվեցին, ձևավորվեցին և ծավալ ստացան 5-րդ դարի դեպքերը։

Կ. Հ. Հարությունյանը իր «Վարդանանց պատերազմը» ոչ մեծածավալ աշխատության մեջ, փորձ է կատարում հաղթահարելու այդ դժվարությունները և 5-րդ դարի ազատագրական շարժումները կապում է Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական դեպքերի պատմության հետ և այդ ֆոնի վրա էլ գնահատում է 5-րդ դարի դեպքերը։ Սա անկասկած հեղինակի առավելությունն է։ Հեղինակի աշխատության 1—9-րդ գլուխները՝ (էջ 3—

---

[1] Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, հ. 4-րդ։

[2] Ն. Ադոնց, Марзбан Васак перед судом историков (տես „ЗВОРАО т. XV, вып. 4, стр. 0121—0130).

[1] Ֆ. Կուլեսերյան, Եղիշե, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909 թ.։

[2] Ն. Վ. Ակինյան, «Եղիշէ վարդապետ և իւր պատմութիւն հայոց պատերազմի...». (տես Հանդես Ամսօրյա 1931—34 թ.)։

[3] Փորթուգալ փաշա, «Եղիշէ Վարդանանց պատերազմ», Կ. Պոլիս, 1905 թ.։

82) նվիրված են Հայաստանի սոցիալ-տնտեսական-քաղաքական պատմության հարցերին, հատկապես, «Վարդանանց պատերազմիս» ընդհանուր նախադրյալների պատմությանը։ Հեղինակի աշխատության այս բաժինների մասին մենք ունենք մի դիտողություն։ Բանն այն է, որ ընկ. Հարությունյանը մոտ 80 էջերի վրա շարադրում է ոչ միայն Հայաստանի, այլև Առաջավոր Ասիայի և Հայաստանին հարևան այլ պետությունների (Բյուզանդիա) պատմությունը և այդ է պատճառը, որ աշխատության այս գլուխները շարադրված են սխեմատիկ և նույնիսկ կան մասեր, որոնք ոչ մի առնչություն չունեն առաջադրված նպատակի հետ։ Այսպես, օրինակ՝ հեղինակը 3—11 էջերում շարադրում է «Հայաստանի քաղաքական կացությունը։ 4-րդ դարի վերջերին և 5-րդ դարի սկզբներին», ապա 33-րդ էջում դարձյալ անդրադառնում է այդ դեպքերին՝ միայն այլ վերնագրի տակ— «Հայաստանի ներքին քաղաքական դրությունը Արշակունյաց պետության անկումից մինչև Հաղկերտ 2-րդի գահակալությունը»։

Մեզ թվում է, որ հեղինակը սխալվել է, երբ Հայաստանի քաղաքական կացությունն անջատում է նրա ներքին վիճակից։ Բացի այդ, կարծում ենք, որ ավելորդ են այն գլուխները, որոնք նվիրված են «Զրադաշտական կրոնի էությանը» (էջ 46—52) և «Հայ գրականության դերը իրանիզացիայի դեմ պայքարելու գործում» (էջ 40—46)։ Ավելին։ Հեղինակը հայոց գրերի և գրականության առաջացման պատմությունը կտրել է իր սոցիալական հիմքից և շարադրել է իրապես զուտ «քաղաքական» հրևույթ։

Հեղինակի կարծիքով, երբ 387 թ. Տիզբոնի դաշինքով Հայաստանը բաժանվեց երկու մասի և հայ ժողովուրդը կորցրեց իր քաղաքական անկախությունը, երբ Հայաստանի երկու մասերը անջատվեցին տնտեսապես, քաղաքականապես և կուլտուրապես, ահա «այդ ժամանակ Հայաստանում առաջավոր մարդկանց շրջանում զարգացում է այն գաղափարը, թե անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի միջոց, որը հնարավորություն տա Հայաստանի երկու մասերի մեջ քաղաքական և կուլտուրական միասնական կապ ստեղծելուն» (էջ 40)։ Այդ միջոցն ըստ հեղինակի հանդիսացել է գրերի գյուտը։ Գրերի գյուտը և քրիստոնեության մուտքը ոչ միայն կուլտուր-քաղաքական երևույթ էր, այլ պատմական Հայաստանի էկոնոմիկայի, ֆեոդալական արտադրական ուժերի և արտադրողական հարաբերությունների զարգացման անխուսափելի հետևանքը։ Չպետք է երբեք մոռանալ, որ քրիստոնեությունը հայկական ֆեոդալիզմի զարգացման անխուսափելի արդյունքը հանդիսացավ։

4-րդ և 5-րդ դարերում ֆեոդալիզմի բուն ամբը անմիջական պահանջ էր առաջադրում արմատական փոփոխություններ մտցնել նաև իդեոլոգիայի բնագավառում։ Հայ ֆեոդալական-նախարարական դասը շատ լավ էր հասկանում, որ ֆեոդալական կենտրոնացված պետականության ամրացման և հզորացման գործում ամենահզոր միջոցներից մեկը հանդիսանում էր քրիստոնեությունը։ Այս էր հիմնական պատճառը, որ 4-րդ դարի վերջերին հայ ֆեոդալական դասը ընդունեց քրիստոնեությունը, որպես պետական պաշտոնական կրոն։ Սակայն այդ դեռ բոլորը չէր։ Քրիստոնեության մուտքի հետևանքով հայ ֆեոդալական դասը ձեռք բերեց գաղափարական պայքարի բանավոր հզոր մի զենք, սակայն հարկավոր էր նաև գրավոր պրոպագանդան, հարկավոր էր մայրենի լեզվով գիր ու գրականություն, դպրություն։ Գրավոր պրոպագանդայի հիմնական միջոցը, ինչպես հայտնի է, հանդիսացավ գրերի գյուտը։ Հասկանալի է, որ գրերի գյուտին մեծապես նպաստեց անկասկած գրագաշտության և հեթանոսության դեմ պայքարի անհրաժեշտությունը։ Սակայն այս հետևանքն էր և ոչ պատճառը։ Հեղինակն իր աշխատության այդ մասում պատճառը շփոթել է հետևանքի հետ։ Չի կարելի համաձայնել հեղինակի նաև այն դրույթի հետ, թե իբր 5-րդ դարը հանդիսացավ հայոց գրականության «ոսկե դարը»։

Ընդհակառակը։ Մատենագիրների մանրամասն և գիտական հետազոտությունը ցույց է տալիս, որ 5-րդ դարը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ, ամենադաժան և մենք կասեինք ողբերգական դարերից մեկն է։ Այդ պատմական այն էպոխան էր, երբ հայ ժողովուրդը զրկվել էր իր պետականությունից, կորցրել իր քաղաքական ինքնավարությունը, հրապարակի վրա դրված էր նրա ֆիզիկական գոյության լինել չլինելու հարցը։ Ավելին։ Նրա երկու բոնակալ հարևանները՝ Պարսկաստանը և Բյուզանդիան, համառ և հետևողական քաղաքականություն էին վարում Հայաստանը ձուլելու, նրան պատմության թատերաբեմից դուրս վանելու համար։ Հայ աշխատավոր ժողովուրդը, սամիկն ու չինականը 5-րդ դարի պատմիչների վկայությամբ, հյուծվում էր ոչ միայն ցտուր, այլ և սեփական շահագործող դասերի կրկնակի լծի և ծանր ու անօրինակ հարկերի տակ։ Հայ ժողովուրդը 5-րդ դարում դեռ շատ հետամնաց էր, տրոհված՝ քաղաքականապես։ Հեղինակը փոխանակ վեր հանելու հայ աշխատավոր ժողովրդի տրագիկ վիճակի պատմու-

թյունը, փոխանակ հանգամանորեն շարադրելու ժողովրդական մասսաների իսկական, գիտական և ճշմարիտ պատմությունը, կրկնում է հայ տգիտիցիոն պատմագրության կողմից դեռ ուշ առաջ դատապարտված սնանկ տեսությունը— հայ պատմության «ոսկե դարի» մասին։ Այս է ընկ. Հ. Հարությունյանի աշխատության առաջին մասերի հիմնական թերությունը։ Եվ վերջապես, այս բաժնի մասին խոսելիս, ավելորդ չենք համարում մատնանշելու, որ ընկ. Հարությունյանը ավելորդ աշխատանք է կատարել ու Եղիշեի օրինակով շարադրել «Մազդեիզմի էության» պատմությունը։

Հեղինակի աշխատության 83-րդ էջերից է, որ սկսվում է «Վարդանանց պատերազմի» իսկական պատմությունը։ Այս բաժնում ընկ. Հարությունյանը հաջող փորձ է կատարում շարադրելու «Վարդանանց պատերազմի անմիջական պատճառները»։ Վկայակոչելով հայ մատենագիրներին և առանձնապես Եղիշեին ու Ղ. Փարպեցուն, հեղինակը փորձում է թափանցելու 5-րդ դարի ազատագրական շարժումների սոցիալական դրդապատճառների մեջ և այդ հիմքի վրա էլ տալ 5-րդ դարի ազատագրական շարժումների սոցիալական գնահատականը։

Սասանյանները 5-րդ դարում դիմում են վճռական և կոնկրետ միջոցների՝ Հայաստանը ձուլել Պարսկաստանի մեջ, դարձնել նրա նահանգներից մեկը։ Այդ քաղաքականությունը առաջ է տանում հատկապես պարսկական թագավոր Հազկերտ 2-րդը։

Եղիշեի և Ղ. Փարպեցու վկայությամբ Հազկերտ 2-րդը 449 թ. Հայաստան է ուղարկում իր աշխարհագիր Դենշապուհին, որը «թեպետ և վերին երեսս կեղծաւոր էր, այլ ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին

Առաջին, զազատութիւն եկեղեցւոյ արգելանէր ի ծառայութիւն։

Երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ։

Երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց.

Չորրորդ, զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն։ Եւ զայս ամենայն առնէր, զի թերևս զմիաբանութիւնն քակտեսցէ, և զուխտն Եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացսն փախուսցէ, զչինականսն վատնեսցէ և առ յոյժ ադամատութեանն ակամայ դիմեսցեն յօրէնս մոգոց։

Եւ ևս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից... և հանեալ զնա ի գործոյն փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և մեւս ևս մոգպետ դատաւոր աշխարհին...»։

Ապա Եղիշեն՝ խոսելով Հայաստանի բոլոր դասերի ծանր կացության և խիստ հարկերի մասին, եզրափակում է. «... Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց այլ և աւերակաց։ Նա ինաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ ըստ արքունի արժանավորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ զի՞արդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեայց»։[1]

Ակնհայտ է, որ Հազկերտ 2-րդի և՛ հարկային, և՛ սոցիալական քաղաքականությունը շոշափում է Հայաստանի բոլոր դասերի, հասարակական բոլոր խավերի և՛ տնտեսական և քաղաքական իրավունքները։ Ընկ. Հարությունյանը վկայակոչելով Եղիշեի այս ուշագրավ և խիստ արժեքավոր վկայությունը, եզրակացնում է. «Սասանյան Պարսկաստանի նման քաղաքականությունը... հետապնդում էր երկու գլխավոր նպատակ, առաջին՝ սահմանափակել հայ նախարարների և հոգևորականների դարավոր իրավունքները, ավելացնել երկրի հարկերը և սաստկացնել կեղեքումները, իսկ երկրորդ՝ վերացնել հայերի ինքնավարությունը, կուլտուրական և կրոնական ինքնուրույնությունը, դրանով սասանյան արքունիքը փաստորեն սպառնում էր Հայաստանի վարչական անկախությանը... Սրանք են այն արմատական պատճառները, որ հայերին մղեցին դեպի 451 թ. պատերազմը» (էջ 89)։

Հեղինակի եզրակացությունը ամբողջապես չի արտահայտում Եղիշեի վկայության բուն էությունը։ Ստացվում է այն տպավորությունը, որ Հազկերտ 2-րդի քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղված էր հատկապես նախարարական եկեղեցական դասի և ոչ թե հայ աշխատավոր ժողովրդի՝ ռամիկի ու շինականի դեմ։ Հեղինակը մեզ համար անհասկանալի պատճառով ընթերցող հասարակության ուշադրությունը չի կենտրոնացնում Եղիշեի վկայության այն մասի վրա, որտեղ նա այնքան արտահայտիչ կերպով խոսում է հայ շինականի ողբալի վիճակի մասին։ Երբ Եղիշեն գրում է, որ Հայոց աշխարհի հարկերն ավելի ծանրացան և այդ հարկերը հավաքվում էին ավազակաբար,

[1] Եղիշէ, «Պատմութիւն Վարդանանց», Մոսկվա, 1894 թ., էջ 26—27։

ապա դա ընդհանուր, վերացական հասկացողություն չէ, այլ կոնկրետ իրականություն։ Ավելին, հայտնի է, որ մինչ Դենշապուհի աշխարհագիրը հայ իշխող դասերը ազատ էին պարսկական հարկերից և հարկերը ամբողջապես դրվում էին աշխատավոր ժողովրդի վրա։ Բացի այդ՝ եթե «Վարդանանց պատերազմի» պատմությունը հետաքրքրող հեղինակը հանգամանորեն չի շարադրում 5-րդ դարի հայ ժողովրդական մասսաների վիճակն ու կացությունը, ապա ինքնըստինքյան հասկանալի է, որ մնում է չպարզաբանված 5-րդ դարի շարժումների ժողովրդական էությունը։

Հուզկերտ 2-րդի վերոհիշյալ քաղաքականության դեմ հանդես եկան Հայաստանի բոլոր դասերը. հասարակական բոլոր խավերը. յուրաքանչյուրը փորձեց 5-րդ դարի շարժումներն օգտագործել իր քաղաքական շահերի, տնտեսական արտոնությունների համար։ Եթե հայ իշխող դասերը՝ հոգևոր և աշխարհիկ ֆեոդալները— պայքարում էին պահպանելու համար իրենց դարավոր արտոնությունները և պապական իրավունքները, ձգտում էին՝ խորտակելով պարսկական արքունիքի դիմադրությունը վերականգնել շահագործման դաժան լուծը հայ աշխատավոր ժողովրդի վրա, ապա 5-րդ դարի հայ աշխատավոր ժողովուրդը պայքարում էր և՛ օտար և՛ սեփական շահագործող դասերի քաղաքական տիրապետության դեմ, նա պայքարում էր իր ողբերգական վիճակը թեթևացնելու համար։ 5-րդ դարի ազատագրական շարժումների այս երկակիությունը մենք իրավունք չունենք աչքաթող անելու, եթե իսկապես ցանկանում ենք օբեկտիվորեն, գիտականորեն շարադրել «Վարդանանց պատերազմի» պատմությունը։ Կրկնում ենք, «Վարդանանց պատերազմի» շրջանում Հայաստանի զանազան դասերը ունեին տարբեր շահեր և նպատակներ։ Սոցիալական և քաղաքական տարբեր կացության մեջ գտնվող հայկական դասերը հանդես եկան միասնաբար և կրոնական քողի տակ։

Բայց կրոնական քողը մեզ չպետք է երբեք թյուրիմացության մեջ գցի և այդ քողի տակ մենք պետք է տեսնենք զանազան դասեր— իրենց նպատակներով և ձգտումներով։ Այս կապակցությամբ չի կարելի համաձայնել հեղինակի այն սխալ, մենք կասեինք վտանգավոր դրույթի հետ, որ իբր «Օտարերկրյա նվաճողների լուծը բոթափելը ստիպել է ժողովրդին իշխանների հետ միասին հանդես գալ այդ նվաճողների դեմ իր սեփական երկիրը պաշտպանելու և անկախություն ձեռք բերելու համար։ Վերոհիշյալ պայքարը 2000 տարվա ընթացքում խթանի փակտորներից մեկն է եղել հայ ժողովրդի պատմության, մի ճանգամանք, որը հաճախ ստվերի մեջ է թողել, կամ թե ճետին գծի վրա է մղել պայքարի առաջին ուղղությունը»[1] (կարդա՛ դասակարգային պայքարը— Ս. Հ.— ընդգծումն իմն է)։

Սակայն այս դեռ բոլորը չէ, ըստ հեղինակի՝ «Պայքարի երկրորդ ուղղությունը (կարդա՛ ազատագրական պայքարը) կազմել է հայ ժողովրդի պատմության սպեցիֆիկ կողմը, որն անտեսվել է հայագետ պատմաբանների կողմից» (էջ 171)։ Մեղմ ասած՝ հեղինակը կանգնած է դասակարգային պայքարի ժխտման տեսակետի վրա, ոչ միայն 5-րդ դարի ազատագրական շարժումների, այլ հայ ժողովրդի շուրջ 2000 տարվա պատմության ողջ ընթացքում։

Ժխտել դասակարգային պայքարը կամ թե համարել այն հայոց պատմության երկրորդական կողմը. նշանակում է, չըմբռնել պատմության զարգացման օրինաչափությունը, չհասկանալ, որ պատմության (այդ թվում հայ ժողովրդի պատմության) շարժիչ ուժը հանդիսացել է դասակարգային սուր պայքարը՝ սկսած դասակարգային հասարակության ծագման շրջանից, ավարտած նրա խորտակման ողջ ժամանակաշրջանում. ժխտել դասակարգային պայքարը և այն փոխարինել ազատագրական պայքարի թեզով, նշանակում է հայ ժողովրդի պատմական անցյալը իդեալականացնել, այն ներկայացնել առանց դասերի, ներկայացնել որպես «միասնական մի զանգված», որտեղ իբր թե չեն եղել դասակարգային սուր հակամարտություններ և ամեն ինչ ընթացել է անդորր ու խաղաղ վիճակում։ Այս վտանգավոր տեսակետը պետք է մերժվի և խիստ կերպով դատապարտվի։

Ընկ. Հ. Հարությունյանը իդեալականացրել է հայ ֆեոդալական դասի և հատկապես լուսավորչական եկեղեցու դերը 5-րդ դարի ազատագրական շարժումների ժամանակ։ Նրա աշխատության 100—114-րդ էջերից այն տպավորությունն է ստացվում, որ ազատագրական շարժումների և՛ կազմակերպիչը և՛ ղեկավարը հանդիսացել են այդ դասերը։

«Հայկական բանակի հետ,— գրում է հեղինակը,— Ավարայրի դաշտ էին գնացել կանայք, աղջիկներ, հոգևորականները Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ, ինչպես նաև Ղևոնդ երեցը կովողներին ոգևորելու և պատերազմին համաժողովրդական բնույթ տալու համար» (էջ 131, ընդգծումն իմն է— Ս. Հ.)։

Ստացվում է այն տպավորությունը, որ պատերազմը մինչև Ավարայրի ճակատամարտը

[1] Վարդանանց պատերազմը, էջ 172։

համաժողովրդական բնույթ չուներ և Հովսեփ եպիսկոպոսն ու Ղևոնդ երեցն էին, որ նրան «համաժողովրդական բնույթ տվեցին»։ Սակայն պատմական իրականությունն այլ է, քան կարծում է հեղինակը։

Ծ'վ Եղիշեի և՝ Ղ. Փարպեցու վկայություններով Հայաստանում տարբերային, մասսայական շարժումները և ժողովրդական հուզումները սկսվել էին դեռ Ավարայրից, նույնիսկ նախարարների Տիզբոնից վերադառնալուց շատ առաջ։ Եղիշեն վկայում է, որ երբ Հայաստանում լուր է ստացվում նախարարների դավանափոխության մասին և այն մասին, որ Հազկերտ Բ-րդը ձգտում է ռազմական արշավանք ձեռնարկել դեպի Հայաստան «զբազմութիւն արանց և կանանց, չինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց... կազմեցաւ, երևեցան ամենեքեան դիմելք և սաղաւարտելք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին, ոչ միայն արանց քաջոց, այլև կանանց առնականանց» (էջ 55), կամ ինչպես վկայում է Փարպեցին «ռամիկ զաւուրացն բազմութիւնն գիմեցին ի տան մոխրանոցի մնալով ընաւ աւագացն հրամանի» (էջ 62)։

Ահա և մի այլ վկայություն։ Պարսկական մոգպետը Հազկերտ Բ-րդին գրած իր նամակներից մեկում գաղը վշտով պատմում է, որ եթե «տնզէն ժողովուրդն այսպէս բռնեսցանե, ապա ինչ կլիներ պարսիկների վիճակը, երբ ռամիկ ամբոխը միանար բանակին (Եղիշե, էջ 58) և վերջապես Ղ. Փարպեցին վկայում է, որ հայ ժողովուրդն էր 5-րդ դարի ազատագրական շարժումների շարժիչ ուժը, որովհետև նա մասնակցում էր պատերազմին «ոմանք մերկանդամբ, ոմանք զինեալք»։ Մեզ համար անհասկանալի պատճառներով հեղինակը այս վկայությունները չի օգտագործել և նրա մոտ Ե-րդ դարի ազատագրական շարժումների համաժողովրդական բնույթը չի պատճառաբանված։

Սրանք են մեր կարծիքով՝ ընկ Հ. Հարությունյանի աշխատության հիմնական թերությունները։ Ի վերջո անհրաժեշտ ենք համարում նշելու, որ նրա աշխատությունը կդառնար ամբողջական, եթե շարադրվեր նաև 481—484 թ. թ. ժողովրդական ազատագրական երկրորդ ապստամբության պատմությունը։

Չէ՞ որ 481—484 թվերին Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ ծայր առած ապրստամբությունը հանդիսանում է 451 թ. ապրստամբության շարունակությունը և տրամաբանական վախճանը։ Հայ հերոս ժողովուրդը շուրջ 30 տարի կամ բացարձակ պայքարով, կամ պարտիզանական կռիվներով պայքարեց պարսիկների դեմ և 484 թ. ստիպեց նրանց կնքելու Նվարսակի դաշինքը, որով և Հայաստանը ստացավ քաղաքական անկախություն։

Ս. ՀԱԿՈԲՅԱՆ